

**ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ  
(1999թ. սեպտեմբերի 22-23, Երևան)**

Այսօր, պատմության նոր հազարամյակի շեմին, Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում հայության բոլոր հատվածների ներկայացուցիչները հավաքվեցին վերաքննելու մեր աշխարհասփյուռ ժողովրդի առջև կանգնած ճակատագրական մարտահրավերներն ու հնարավորությունները՝ պատմական նոր իրողությունների պայմաններում հստակեցնելու համազգային մեր առաջնահերթությունները:

Սա, հիրավի, աննախադեպ պատմական իրադարձություն է, որն արժևորելով Հայրենիք-Սփյուռք փոխհարաբերությունները, սկիզբ է դնում այնպիսի գործընթացի, որն այսուհետ նոր որակով կապահովի հայության բոլոր հատվածների ներդաշնակ գործակցությունը՝ համազգային խնդիրների համատեղ քննարկման և միասնական ջանքերով լուծման համար:

Հայությունը չի կարող անտարբեր մնալ ժամանակի հրամայականներին: Եվ այդ մարտահրավերներին դեմ հանդիման մենք սահմանում ենք այն հիմնարար սկզբունքները, համոզմունքներն ու մոտեցումները, որոնք ընդհանուր են ամենքիս համար՝ որտեղ էլ որ գտնվելիս լինենք: Մեր ժողովրդի ուժը բխում է իր բոլոր հատվածների բազմազան փորձառությունից և միասնական է իր վերջնանպատակում:

Մենք ունենք ընդհանուր պատմություն, ընդհանուր ճակատագիր և ընդհանուր նպատակներ, և պետք է առավել միավորենք մեր կարողությունները, գործենք առավել միասնաբար, հաշվի առնենք յուրաքանչյուր հայ հանրության առանձնահատկությունները և կարողանանք համադրել մեր գործունեությունն ու ապագային միտված նախաձեռնումները:

20-րդ դարասկիզբը սև էջ դարձավ մեր պատմության մեջ՝ Օսմանյան կայսրության կողմից մեր ժողովրդի դեմ գործադրված ցեղասպանության ոճիրով: Դարասկիզբը նաև եղավ հաղթանակի հանգրվան՝ 1918 թվականի խիզախ ճակատամարտով և Հայաստանի անդրանիկ անկախ հանրապետության հիմնադրմամբ: Հաղթահարելով Մեծ եղեռնի հետևանքները և մեր ազգի առջև ծառայած բազմապիսի խոչընդոտները, դարավերջի բարձրակետը հանդիսացավ այսօրվա անկախ և ինքնիշխան Հայաստանի Հանրապետությունը: Մեր պետության պահպանումն ու ամրապնդումը համայն հայության առջև ծառայած առավել բախտորոշ, անմիջական, հիմնարար ու հեռագնա խնդիրն է:

Հայաստանի Հանրապետության աննահանջ հզորացումն ու վերընթացը բխում է բոլորիս շահերից, քանզի Հայաստանը համայն հայության հայրենիքն է: Յուրաքանչյուր հայ պարտավոր է իր լիակատար աջակցությունը ցուցաբերել, որպեսզի Հայաստանը

լինի հզոր, կենսունակ ու բարգավաճ երկիր և հայ ժողովրդի անվտանգ հարատևման և իր ազգային շահերի առաջնդման երաշխիք:

Հայաստանը գտնվում է աշխարհաքաղաքական բարդ տարածաշրջանում, որտեղ նա պիտի կարողանա մեր ազգի մարդկային և նյութական կարողությունները վերածել ուժի և ձևավորել արդիական հզոր տնտեսություն և հասարակարգ: Նա պիտի կարողանա սոցիալական բոլոր խավերի մասնակցությամբ արձագանքել աշխարհի սրընթաց փոփոխություններին: Հայը, որտեղ էլ որ գտնվելիս լինի, ընդունում է Հայաստանի Հանրապետության տնտեսական ու հոգևոր առաջընթացի ապահովմանը զինվորագրվելու ընդհանուր հանձնառությունը:

Ազգային մեր մյուս իրագործումը նոր հազարամյակի շեմին Արցախի ազատագրումն էր օտարի լծից: Արցախահայությունը աներեր պաշտպան կանգնեց իր նախնյաց հողերին և նվաճեց ազատ ապրելու իրավունք: Յուրաքանչյուր արցախահայի անվտանգությունն ու տնտեսական բարօրությունը համայն հայության կարևորագույն հոգսն ու խնդիրն է: Հայաստանի Հանրապետությունն այսուհետ ևս սատարելու է Արցախին՝ ապրելու ազատ ու անվտանգ: Եվ այս հանձնառությանը լծակից է Սփյուռքը, որը շարունակելու է ամենայն ջանք գործադրել՝ ապահովելու Արցախի ազատությունն ու տնտեսական զորացումը:

Թեև Հայաստանի անկախացումից ի վեր մեր ժողովրդի առջև նոր հիմնահարցեր են ծառայել Սփյուռքում, սակայն մեր ընդհանուր խնդիրները շարունակում են մնալ նույնը: Դրանցից կենտրոնականը աշխարհի տարբեր հանգրվաններում անվտանգ կենսագոյության, սեփական մշակույթի զարգացման և ինքնության ապահովումն է:

Հայաստանի Հանրապետությունը լիապես հանձնառու է ստանձնել իր բաժինը՝ ապահովելու համար սփյուռքահայության այս նպատակների իրականացումը: Մեր պետությունը գործի կղնի իր բոլոր հաստատությունները՝ ըստ ամենայնի ցուցաբերելու Սփյուռքի առաջընթացի համար անհրաժեշտ աջակցություն:

Մեր ազգային ամբողջության բոլոր բաղադրիչները՝ Հայաստանի Հանրապետությունը, Արցախը և Սփյուռքը շաղկապված են: Մեր գործունեությունը փոխկապակցված է՝ ինչպես մեր պատմությունը, ներկան և ապագան: Ուստի մենք պետք է որդեգրենք համագործակցության՝ մեզ միավորող սկզբունքների ու չափանիշների մի այնպիսի համակարգ, որն այն դարձնի ուժի և հզորության աղբյուր:

Մենք անվերապահորեն հավաստում ենք, որ մարդկային կյանքն անձեռնմխելի է, նրա արժանապատվությունը՝ բարձրագույն արժեք, և ճանաչում ենք անհատի քաղաքացիական, քաղաքական ու տնտեսական իրավունքները:

Մենք համոզված ենք, որ ժողովրդավարական սկզբունքներն ու մարդու բնական իրավունքներն ու ազատություններն առաջնային նշանակություն ունեն պետական ու համայնքային հաստատությունների գործունեության համար:

Մենք հավատացած ենք, որ օրինականության գերակայությունը անհրաժեշտ նախապայման է հավասար հնարավորությունների ապահովման, արդարադատության անաչառ գործադրման ու վարչական կամայականությունների բացառման համար:

Մեզ համար հիմնարար արժեքներն են խաղաղությունը, ժողովուրդների բարեկամությունն ու համագործակցությունը, մարդու և ազգերի ազատ զարգացման իրավունքների հարգումը, խղճի և դավանանքի ազատությունը:

Մենք հետապնդում ենք ստանձնում մեր ազգային, պետական ու տեղական հաստատությունների գործունեությունը վերափոխել այնպես, որ դրանք ապահովեն հավասարությունն ու իրենց բոլոր անդամների ներուժի լիարյուն դրսևորումը: Ժողովրդավարական հիմունքներով կազմավորված ու իրենց անդամների առջև հաշվետու այդ հաստատությունները պետք է ամենայն ճիգ գործադրեն՝ արմատախիլ անելու շահամոլությունը, անձնավորված հարաբերություններն ու հատվածականությունը:

Մենք գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունն ու նրա պետական կառույցներն անհրաժեշտություն ունեն վերափոխվելու իրենց դերը՝ ի պաշտպանություն Սփյուռքի շահերի և իղձերի: Հայերը հայ են ամենուրեք, և որևէ տարբերություն չկա, թե որտեղ են ապրում նրանք:

Հայերը չեն կարող «օտարներ» լինել իրենց հայրենիքում, և Հայաստանի Հանրապետությունը նախաձեռնում է հաղթահարել երկքաղաքացիության բացառման Սահմանադրական արգելքը՝ հնարավորություն ընձեռելով յուրաքանչյուր հայի լիարժեք ներկայություն հաստատել իր հայրենիքում:

Հրատապ է մեր ազգային օրակարգը կոնկրետ քայլերով առաջ մղելու հարցը: Այն զարգացող օրակարգ է և ընդգրկելու է բազմաթիվ նախաձեռնումներ՝ քաղաքականության, գիտության, մշակույթի, տնտեսության, ֆինանսների, մարդասիրական օժանդակության և այլ բնագավառներում:

Այդ բնագավառներում աշխատանքները շարունակվելու են և կյանքի կկոչվեն ու կիրականացվեն առանձին, կոնկրետ ծրագրերի միջոցով:

Մենք վերահաստատում ենք մեր հավաքական ուժերով հետապնդելու հայ ժողովրդի պատմական իրավունքներն ու նրանց շարունակականության պաշտպանությունը: Մենք հանձնառու ենք համատեղ ջանքերով հասնել միջազգային հանրության կողմից 1915թ. Հայոց ցեղասպանության անվերապահ ճանաչմանը:

Մենք հավաստում ենք և վճռական ենք մեր ազգային նպատակները, իղձերը, երազանքը հավաքական միասնությամբ իրականացնելու հարցում՝ ի փառս հայ ժողովրդի անվտանգ ու բարգավաճ ապագայի, նոր հազարամյակում նրան արժանի կենսակերպ ու զարգացում ապահովելու համար:

**ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ  
ԱՐՑԱԽԻ ՄԱՍԻՆ (1999թ. սեպտեմբերի 22-23, Երևան)**

Արցախի ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի վերսկսումը 1988 թվականին հզոր խթան հանդիսացավ հայության ազգային զարթոնքի համար: Թեև 20-րդ դարի վերջին հայ ժողովրդի առջև կրկին ծառայացավ ցեղասպանության սպառնալիքը, ազգի ողջ ուժերի համախմբումը թույլ տվեց վերացնել մեր պատմական հայրենիքի ևս մեկ մասի հայության բռնի տեղահանման և ֆիզիկական բնաջնջման վտանգը:

Ի պատասխան պատմական արդարության վերականգնմանն ուղղված արցախահայության խաղաղ և սահմանադրական պահանջների, Ադրբեջանը, որը երբեք չի ունեցել որևէ օրինական իրավունք Լեռնային Ղարաբաղի նկատմամբ, դիմեց էթնիկ զտումների և Ադրբեջանի ու Հյուսիսային Արցախի մոտ կես միլիոն հայերի տեղահանման, իսկ հետագայում, պատերազմ հրահրելով, ֆիզիկական բնաջնջման վտանգի առջև կանգնեցրեց Լեռնային Ղարաբաղի հայությանը: Չնայած դրան, հանուն ազատության Արցախի ժողովուրդն իր պայքարում երբեք չի խախտել միջազգային իրավունքի համընդհանուր նորմերն ու սկզբունքները:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումն ու արցախահայության հաղթանակը պատերազմում հնարավոր դարձան ողջ հայության ջանքերի շնորհիվ: Մենք երախտապարտ ենք նաև այլ ժողովուրդների և երկրների ներկայացուցիչներին՝ իրենց մարդասիրական արդար կեցվածքի, հանուն ազատության և սեփական հողում ապրելու իրավունքի արցախահայության պայքարը պաշտպանելու համար:

Մենք հայտարարում ենք, որ իր ճակատագիրը տնօրինելու Արցախի ժողովրդի օրինական իրավունքի իրագործումը վճռորոշ նշանակություն ունի ողջ հայության ապագայի համար: Արցախի ժողովրդի ինքնորոշման վերահաստատումը, ինչը ենթադրում է ԼՂՀ ճանաչումը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, համապատասխանում է աշխարհում ձևավորվող միջազգային հարաբերությունների համակարգին, և դրանով իսկ նախադրյալներ է ստեղծում Հարավային Կովկասի տարածաշրջանում ժողովրդավարական ինստիտուտների ձևավորման և տնտեսական ինտեգրացման համար:

Արցախի ժողովրդի բարեկեցության մակարդակի բարձրացումը և հայրենի հողի վրա նրանց նյութական և հոգևոր պահանջունքների լիարժեք բավարարման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը մեր կարևորագույն քաղաքական խնդիրներն են, և այդ իսկ պատճառով, գերխնդիր ենք համարում ԼՂՀ սոցիալ-տնտեսական հարցերի լուծման սատարումը: Դա ենթադրում է նաև նախադրյալների ձևավորում

փախստականների և տեղահանվածների վերադարձի համար՝ ապահովելով նրանց արժանավայել կենսապայմաններով:

Պատերազմի ամենածանր օրերին Արցախի փրկության և պաշտպանության գաղափարը միավորող ուժ հանդիսացավ՝ նպաստելով Հայաստանի և Սփյուռքի համախմբմանը: Աշխարհասփյուռ հայության գրեթե բոլոր հատվածները, սեփական քաղաքական և կուսակցական մոտեցումներից անկախ, սատար կանգնեցին Արցախի հայությանը: Մինչ օրս շարունակվող այդ եղբայրական օգնությունն ու համագործակցությունը մեր ազգի առջև ծառայած խնդիրները միասնաբար լուծելու ունակության դրսևորումն են:

Այսօր մենք կրկին հայտարարում ենք, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ մեր պատմական հայրենիքի այդ փոքրիկ բեկորի ճակատագիրը բախտորոշ նշանակություն ունի ամբողջ հայության համար, և վերահաստատում մեր պատրաստակամությունը՝ նպաստելու Ղարաբաղյան հիմնահարցի արդարացի և համապարփակ կարգավորմանը, որը ենթադրում է ԼՂՀ-ի ժողովրդի ինքնորոշումը՝ հիմնված իր կամքի ազատ դրսևորման վրա: